



ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2020Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ*




ԹԻՎ 3

**Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում
2020թ. հունվար-մարտին***

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնանկումը (2020թ. մարտը 2019թ. մարտի նկատմամբ) կազմել է 0.1%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ գրանցվել է 0.5% գնաճ:

	Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՍՀՆԴ) երկու նիշ մակարդակ	2020թ.			
		մարտը		հունվար-մարտը 2019թ. հունվար-մարտի նկատմամբ,%	մարտը 2019թ. դեկտեմբերի նկատմամբ, ինդեքս
		2019թ. մարտի նկատմամբ, %	2020թ. փետրվարի նկատմամբ,%		
00	Սպառողական գների ինդեքս - ընդամենը	-0.1	0.5	-0.1	101.7
	<i>այդ թվում՝</i>				
01	Մենդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	-2.8	1.3	-2.9	103.7
02	Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	10.0	1.4	8.0	106.2
03	Հագուստ և կոշիկ	1.7	0.4	2.7	97.3
04	Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	1.3	-0.1	1.1	99.7
05	Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	-0.5	0.1	-0.3	100.2
06	Առողջապահություն	2.1	0.0	2.1	101.2
07	Տրանսպորտ	1.5	-0.5	2.2	98.8
08	Կապ	-0.1	0.0	-0.1	100.0
09	Հանգիստ և մշակույթ	-1.8	-0.4	-1.3	100.6
10	Կրթություն	3.7	0.0	3.7	100.0
11	Ռեստորաններ և հյուրանոցներ	0.9	-0.2	1.4	100.1
12	Տարբեր ապրանքներ և ծառայություններ	2.8	0.0	3.0	103.0

Սպառողական գների փոփոխությունները 2020թ. մարտին 2015թ. նկատմամբ **




* Մույն վերլուծականում հիմնականում տրված է Հայաստանի Հանրապետությունում 2020թ. մարտի գնային փոփոխությունների հակիրճ մեկնաբանությունը: Սպառողական գների ինդեքսների ավելի ընդարձակ (այդ թվում, կուտակային (աճողական)) տեղեկատվությունը գետեղվում է <<Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում>> ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-301):

** Եվրոստատի կողմից սահմանված ինդեքսի հիման ժամանակաշրջան:


Ենթահնդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2020թ. մարտին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)

%



Ենթահնդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2020թ. մարտին (նախորդ ամսվա նկատմամբ)

%




Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի

	2020թ.			
	մարտը		հունվար-մարտը 2019թ. հունվար-մարտի նկատմամբ,%	մարտը 2019թ. դեկտեմբերի նկատմամբ, ինդեքս
	2019թ. մարտի նկատմամբ,%	2020թ. փետրվարի նկատմամբ,%		
Սպառման ապրանքներ այդ թվում՝	-0.7	0.9	-0.7	102.5
անդամաբերք և ոչ ակտիվային խմիչք (ներառյալ ակտիվային խմիչք և ծխախոտ)	-1.6	1.3	-1.8	103.9
ոչ պարենային ապրանքներ	1.3	0.0	1.7	99.5
Ծառայություններ	1.3	-0.1	1.4	100.4

Սպառողական գների հավելվածը 2011-2020թթ. մարտին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %




Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2020թ. մարտին փետրվարի համեմատ սպառողական գներն աճել են 0.2-0.8%-ով, այդ թվում, համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք.Աշտարակում: Մայրաքաղաքում սպառողական գների մակարդակն աճել է 0.6%-ով:

Սննդամթերքի գներ: 2020թ. մարտին 2019թ. մարտի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 2.8% գնանկում, իսկ 2020թ. փետրվարի համեմատ՝ 1.3% գնաճ: Վերջինիս մեծապես նպաստել են մրգի և բանջարեղենի՝ համապատասխանաբար 4.4% և 6.4% գնաճերը:

Բանջարեղենի ապրանքախմբում¹ 2020թ. մարտին 2019թ. մարտի համեմատ արձանագրվել է 6.6% գնանկում, իսկ 2020թ. փետրվարի համեմատ՝ 6.4% գնաճ:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2018-2020թթ. հունվար-մարտին

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2020թ. մարտին փետրվարի համեմատ բանջարեղենի գներն աճել են 2.4-8.4%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է


¹ 2020թ. փետրվար-մարտին 2019թ. փետրվար և մարտ ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների ինդեքսների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

ք. Արտաշատում: Մայրաքաղաքում բանջարեղենի գներն աճել են 7.4%-ով:

Մրգի ապրանքախմբում¹ 2020թ. մարտին 2019թ. մարտի համեմատ արձանագրվել է 0.9%, իսկ 2020թ. փետրվարի համեմատ՝ 4.4% գնաճ:

Մրգի գների փոփոխությունները 2018-2020թթ. հունվար-մարտին

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2020թ. մարտին փետրվարի համեմատ մրգի գներն աճել են 1.9-5.3%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է մայրաքաղաքում:

2020թ. մարտին փետրվարի համեմատ մրգի և բանջարեղենի ապրանքախմբերի ընդհանուր գնաճը կազմել է 5.6%: Վերը նշված ապրանքախմբերը սպառողական զամբյուղում ունենալով 10.32% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի աճին 0.6 տոկոսային կետով:

2020թ. մարտին 2019թ. մարտի համեմատ շաքարի և շաքարավազի ապրանքախմբում արձանագրվել է 10.6% գնանկում, իսկ 2020թ. փետրվարի համեմատ՝ 2.1% գնաճ:

2020թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետությունում արձանագրվել է հացաբուլկեղենի և ձավարեղենի՝ 0.2%, յուղերի և ճարպերի՝ 0.3%, ծխախոտային արտադրատեսակների՝ 0.6%, ալկոհոլային խմիչքի 1.9% գնաճ, իսկ սուրճի, թեյի, կակաոյի և ոչ ալկոհոլային խմիչքի ապրանքախմբերում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Մսամթերքի ապրանքախմբում 2020թ. մարտին 2019թ. մարտի համեմատ գրանցվել է 4.5%, իսկ 2020թ. փետրվարի համեմատ՝ 1.2% գնանկում:

Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2020թ. մարտին 2019թ. մարտի համեմատ արձանագրվել է 7.7%, իսկ 2020թ. փետրվարի համեմատ՝ 0.8% գնանկում: Ձվի գինը 2020թ. մարտին 2019թ. մարտի համեմատ նվազել է 31.2%-ով, իսկ 2020թ. փետրվարի համեմատ՝ 7.5%-ով:

Չկան և ծովամթերքի ապրանքախմբում 2020թ. մարտին 2019թ. մարտի համեմատ գրանցվել է 5.3%, իսկ 2020թ. փետրվարի համեմատ՝ 0.8% գնանկում:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2020թ. մարտին 2019թ. մարտի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 1.3% գնաճ, իսկ 2020թ. փետրվարի համեմատ պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:


2020թ. մարտին փետրվարի համեմատ մաքրող, լվացող միջոցների գներն աճել են 0.1%-ով, կահույքինը և կահավորանքինը, գորգերինը և հատակի ծածկերինը՝ 0.2%-ով, խոշոր կենցաղային սարքերինը՝ 0.5%-ով, հագուստինը՝ 1.2%-ով, ոսկերչական զարդերինը՝ 1.8%-ով: Միաժամանակ, հանրապետությունում արձանագրվել է տարբեր տեսակի կոշիկեղենի՝ 1.0%, բնակարանի նորոգման և սպասարկման նյութերի՝ 0.6%, վառելանյութերի և քսանյութերի՝ 0.5%, գրասենյակային պարագաների՝ 0.3%, կենցա-

դային և այգեգործական գործիքների 0.1% գնանկում, իսկ ապակե ամանեղենի, ճաշասպասքի և տնային կահ-կարասու, դեղագործական ապրանքների, կենցաղային փոքր էլեկտրական սարքերի ապրանքախմբերում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2020թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 3.7% և 3.0% գնանկում: 2020թ. մարտին 2019թ. մարտի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գները նվազել են 4.6% և 6.9%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ՝ 4.5% և 4.4%-ով:

Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2017-2020թթ.

2015թ. նկատմամբ



Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում 2020թ. մարտին փետրվարի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.6-0.2% գնանկում, իսկ 2-ում՝ 0.2-0.3% գնաճ: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.2%-ով:


Ծառայությունների սակագներ: Մատուցված ծառայությունների ոլորտում 2020թ. մարտին 2019թ. մարտի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սակագների 1.3% հավելաճ, իսկ 2020թ. փետրվարի համեմատ՝ 0.1% նվազում:

2020թ. մարտին փետրվարի համեմատ հանգստի կազմակերպման համալիր ծառայությունների սակագների մակարդակը նվազել է 1.2%-ով, մարդատար տրանսպորտի ծառայություններինը՝ 0.6%-ով (պայմանավորված օդային տրանսպորտով միջազգային չվերթների ծառայությունների սակագների 3.8% նվազումով), հյուրանոցային ծառայություններինը՝ 0.3%-ով, սպասարկման ծառայություններինը (ռեստորաններ, սրճարաններ և համանման կազմակերպություններ)՝ 0.2%-ով, հանգստի և մշակութային միջոցառումների հետ կապված ծառայություններինը՝ 0.1%-ով, իսկ բնակարանի նորոգման և սպասարկման ծառայությունների, կենցաղային սարքերի նորոգման, բժշկական, կրթության, կապի, վարսավիրանոցների և անձնական խնամքի սպասարկման սրահների, իրավաբանական ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում, այդ թվում և մայրաքաղաքում, 2020թ. մարտին փետրվարի համեմատ արձանագրվել է մատուցված ծառայությունների սակագների 0.1% նվազում:

Արտաթույթի շուկա: 2020թ. մարտին փետրվարի համեմատ սպառողական և արտաթույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 0.5% և 2.1% հավելաճ (ԱՄՆ դոլարն արժևորվել է): 2020թ. մարտին 2019թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1.7% և 2.3% հավելաճ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 2.6% և 0.6% հավելաճ: 2020թ. մարտին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 489.0 դրամ, ինչը 0.3%-ով բարձր է 2019թ. մարտի համապատասխան ցուցանիշից (487.5 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2019-2020թթ. հունվար-մարտին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ



Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական զների տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում

	2020թ.			
	փետրվարը		մարտը	
	2020թ. հունվարի նկատմամբ	2019թ. փետրվարի նկատմամբ	2020թ. փետրվարի նկատմամբ	2019թ. մարտի նկատմամբ
<i>Միրգ, ընդամենը</i>	0.1	-2.1	4.4	0.9
<i>այդ թվում՝</i>				
Խնձոր	-2.3	11.8	4.6	25.6
Տանձ	0.7	-2.5	9.9	11.4
Նուռ	6.4	-1.9	13.3	7.2
Խաղող	3.0	15.4	7.5	19.6
Ադամաթուզ (բանան)	2.8	-6.5	-1.8	-18.3
Նարինջ	-2.7	9.1	6.3	12.5
Մանդարին	4.1	1.7	15.2	7.0
Կիտրոն	-0.3	18.9	9.8	29.3
<i>Բանջարեղեն և կարտոֆիլ, ընդամենը</i>	-0.1	-12.9	6.4	-6.6
<i>այդ թվում՝</i>				
Կաղամբ	-0.9	-35.9	2.6	-53.6
Կանաչ սոխ	-15.6	5.4	-12.7	-6.0
Խաղող կանաչեղեն	3.1	-9.4	-4.5	-10.8
Լոլիկ	4.2	-13.0	11.5	0.4
Վարունգ	-9.6	-16.0	14.8	6.2
Սմբուկ	12.8	0.5	11.2	8.5
Պղպեղ	7.0	-17.5	21.7	-3.0
Գազար	-2.0	2.9	4.7	0.7
Ճակնդեղ	-1.4	24.0	1.7	29.3
Գլուխ սոխ	-0.3	-11.8	9.2	-17.5
Սխտոր	8.2	-3.2	19.3	19.4
Սունկ	-3.3	-7.7	-0.5	-9.0
Կարտոֆիլ	3.2	-12.0	-1.0	-11.0

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում¹

	2019թ. դեկտեմբերը 2018թ. դեկտեմ- բերի նկատմամբ	2020թ.		
		հունվարը	փետրվարը	փետրվարը 2019թ. դեկտեմբերի նկատմամբ
		նախորդ ամսվա նկատմամբ		
Ավստրիա	101.8	99.3	100.0	99.3
Բելգիա	100.9	98.9	101.5	100.3
Բուլղարիա	103.1	100.5	100.0	100.5
Հունգարիա	104.1	100.9	100.3	101.1
Գերմանիա	101.5	99.2	100.6	99.7
Հունաստան	101.1	98.7	99.6	98.4
Դանիա	100.8	100.2	100.4	100.6
Իռլանդիա	101.1	99.3	100.6	99.9
Իսպանիա	100.8	98.6	99.9	98.6
Իտալիա	100.5	98.2	99.5	97.7
Կիպրոս	100.7	99.2	100.2	99.3
Լատվիա	102.1	100.3	100.2	100.5
Լիտվա	102.7	100.2	100.0	100.2
Լյուքսեմբուրգ	101.8	99.6	101.0	100.5
Մայթա	101.3	98.6	100.6	99.2
Նիդերլանդներ	102.8	98.7	100.9	99.6
Լեհաստան	103.0	100.7	100.6	101.2
Պորտուգալիա	100.4	99.2	99.4	98.6
Ռումինիա	104.0	100.7	100.0	100.7
Սլովակիա	103.2	101.3	100.1	101.4
Սլովենիա	102.0	99.5	100.4	99.9
Ֆինլանդիա	101.1	99.6	100.5	100.1
Ֆրանսիա	101.6	99.5	100.0	99.5
Խորվաթիա	101.3	99.9	99.5	99.4
Չեխիայի Հանրապետություն	103.2	101.6	100.3	101.8
Շվեդիա	101.7	98.7	100.4	99.1
Էստոնիա	101.8	99.4	100.6	100.0
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-27) ²	101.6	99.3	100.2	99.5
Հայաստան	100.7	101.4	99.8	101.2
Ռուսաստան	103.0	100.4	100.3	100.7
Բելառուս	104.7	100.9	101.0	101.9
Ուկրաինա	104.1	100.2	99.7	99.9
Ղազախստան	105.4	100.7	100.6	101.3
Ղրղզստան	103.1	100.6	100.6	101.2
Մոլդովա	107.5	100.6	99.98	100.6
Տաջիկստան	...	100.6	100.4	...
Վրաստան	107.0	100.7	100.3	101.0
Կանադա	102.2	100.3	100.4	100.7
Նորվեգիա	101.2	99.9	99.9	99.8
Բրազիլիա	104.3	100.2	100.3	100.5
Կորեայի Հանրապետություն	100.7	100.6	100.0	100.6
Չինաստան	104.5	101.4	100.8	102.2
Միացյալ Թագավորություն	101.3	99.7
ԱՄՆ	102.3	100.4	100.3	100.7
Թուրքիա	111.8	101.4	100.4	101.7
Շվեյցարիա	99.9	99.6	99.9	99.5
Ճապոնիա	100.8	99.9	99.8	99.7

... - Տվյալները բացակայում են:

¹ Տեղեկատվությունը պատրաստվել է Ռուսաստանի Դաշնության պետական վիճակագրական ծառայության կայքում գետեղված «2020թ. փետրվարի Ռուսաստանի և արտասահմանյան երկրների սպառողական գների ինդեքսների վերաբերյալ տեղեկանք»-ի հիման վրա:

² Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2020թ. հունվար-ապրիլին» մամուլի հաղորդագրության հրատարակման ժամկետը, համաձայն «2020 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2020թ. մայիս ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-301, Մաս 3, էջ 132):